ՆՈՐ-ԴԱՐ

№ 211 ՅԱՍԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ աբաթ 6 Դեկտեմբերի 1897 Հ աբաթ 6 Դեկտեմբերի ՅԱՍԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 211

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական *ամենօրեայ թերթը* առաջիկայ 1898-ին կրնայ տարածուիլ *Թիֆլիսում* նոյն ձեւով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և ուրիշներին հետեւող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵԻՐՈՊԱՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում Տ/Տ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Լորիս-Մելիքեան փողոցում պոստ-հեռագրատան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանն այս հասցէով՝ Тифлисъ въ редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tifils (Caucase), rédaction de journal „Nor Dar“

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 14-ին, կըկայանայ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ԲԱԶԱՐՈՎ

ՅՕԳՈՒՏ

ՀԱՎԿԱՍԻ ՀԱՑԱՒՈՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բազարի սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։ Մուտքը – 2 ր. 10 կ։ Բազարում եղած բոլոր առարկաների վրայ նշանակուած կըլինեն գները։ Նուիրատուութիւններն ընդունւում են ընկերութեան գրասենեակում և իշխ. Ս. Թումանեանցի մօտ։ Պարոնները պիտի լինեն ֆրակով։

(Խմբ.) 5—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող — Հայացած ցիգաններ։
Դիլէնի կարծիքը անգլիայի քաղաքականութեան մասին։
Դաղթականները պարսկաստանում։
Էլի Դրայֆուսը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Թաւրիզ։
Քաղաքական. — Թիւրքիայ Ապաստամբութիւն Արաբիայում. Կրետէի խնդիրը։ Չին.-գերմանական միջնադէպը։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Բանասիրական. Մի պոյտ Լոնդոնում։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 5 դեկտեմբերի, 1897 թ.

ՀԱՑՕՑՔ ՑԻԳԱՆՆԵՐԻ ՍՈՒՐԻ

Ազգերի ծագումը, նրանց կեանքը և վախճանը կարելի է համեմատել վազող և կանգնած ջրերի հետ։ Փոքրիկ առուները, գետակները լճափւում են մեծ գետերի մէջ, մեծ գետերը ծովի մէջ։

Այսպէս ասած, տեսնում ենք մենք ահագին մեծ և ընդարձակ գետը, բայց չգիտենք, թէ որտեղից է նա սկիզբն առնում։ Հետեւելով գնում ենք, որ այդ մեծ գետը սկզբումը կազմւում է լեռներից հոլուող ձիւներից, հողի վրայով և լեռ հողի տակով հոսող փոքրիկ, ազիւ նկատելի առուներից։ Այդպէսով կազմուած գետակը առաջ է գնում և ճանապարհին իւր մէջ ընդունելով ուրիշ առուներից, գետակներից հոսող ջրերը, ընդարձակւում է գետ է դառնում և առաջ է վազում, մինչև որ հասնում է ծովը, եթէ ճանապարհին մի ուրիշ գետի մէջ չէ լճափւում։

Այդպէս էլ շատ անգամ դժուար է որոշել թէ որտեղից և ինչ տարրերից (ցեղերից) է իւր սկիզբն առնում մի ժողովուրդ։

Գրեթէ ամեն ազգերի սկզբնաւորութիւնը մութն է, բայց ժամանակի ընթացքում փոքրիկ ժողովուրդները մեծանում են իրենց մէջ ընդունելով ուրիշ ժողովուրդներ։ Այդպիսով փոքր ազգը մեծանում է, ինչպէս գետակը գետ դառնում, և աւելի մեծանալով մեծ ազգ է դառնում։ Ինչպէս ծովը իւր մէջ է ընդունում և կլանում գետերը, այնպէս և մեծ ազգերի մէջ գտնում են իրենց վախճանը շատ ժողովուրդներ։

Թէ ինչպէս և ինչու է այս-ինչ ժողովուրդը այն-ինչ ժողովրդի մէջ անհետացել և նրա մէջ կուլ գնացել, դրա պատճառները շատ են, բայց ամենքի համար և ամեն տեղ էլ մէկ են։ Ինչպէս որ աշխարհիս ամեն տեղի գետերը միևնոյն օրէնքներով և պայմաններով դէպի ծովն են ընթանում, ինչ պայմանների հիմանց վրայ Դանուբ և Դնեպր գետերը լճափւում են Սև ծովը, նոյն պայմանների հիմանց վրայ Կուրը և Արաքսը միմեանց զրկած գտնում են իրենց հանգիստը Կասպեան ծովում։ Բայց Կասպեան ծովն էլ իւր կեանքն ունի, որ փոփոխութեան է ենթարկւում, մեծանում է և վերջը փոքրանում և ցամաքում, ճիշտ միևնոյն բնական պայմաններին են ենթարկւում ժողովուրդները, ինչ որ գետերը, միայն ուրիշ չափով։

Ժողովուրդների ծագումը և կեանքը նմանեցնելով գետերի ընկղմաւորութեան և վախճանին, ի նկատի ունինք բնական օրէնքը։ Բայց արհեստական ճանապարհով էլ մի ժողովուրդ միւսի հետ խառնւում է, ինչպէս որ կարելի է արհեստական ճանապարհով գետի ընթացքը փոխել և տալ ուրիշ ուղղութիւն, ջրանցքներ կազմելով։

Այս դիտողութիւնները անելու մեզ առիթ տուաւ «Կաւկազ» թերթի մի դիտողութիւնը, որ նա արել է հայացած ցիգաննների մասին «Մուրճ» ամսագրում լոյս տեսած մի յօդուածի առ իւ։

«Կաւկազ» թերթի այժմեան խմբագրութիւնը, հայերին շատ սիրելուց, թէ ատելուց, այդ միևնոյն է, շատ է գրում հայերի մասին և հետեւում հայոց կեանքին։ Հակառակ միւս թերթերին, մենք չենք նեղանում «Կաւկազ»-ից, որ նա խնամալէս հետեւում է մեր հայոց մէջ ինքն իրեն յառաջադէմ անուանող թերթի մերկացնող ուղղութեանը։

Այսինքն, միշտ որոնում է հայոց կեանքի վատ կողմերը կամ նրա մէջ վատը տեսնում և այդ ուղղութեամբ առաջ ընթանալով, «Կաւկազ»-ն էլ ակնարկած հայ թերթի պէս այնպիսի լեզուով է խօսում, որ կարելի չէ լինում պատասխանել ըստ հարկին...

Բայց թողնենք այդ։

Հայացած ցիգաննների մասին «Մուրճ» ամսագրում լոյս տեսած մի յօդուածից մի կտոր մէջ բերելով, որով մենք իմանում ենք, որ միմիայն հայոց ազգն է, որ կարողացել է ցիգաններին հայացնել, որ ոչ մի ազգի և ոչ մի բանի միջոցով չի աջողուել ցիգաններին կլանել, որ ամեն տեղ էլ ցիգանը ցիգան է մնացել, իսկ հայերի մէջ ցիգաննները հայացել են և մինչև անգամ հայ գրականութեան մէջ յայտնի հայեր կան, որոնք ծագումով ցիգաններ են, ինչպէս օրինակ Քերովբէ Պատկանեանը և այլն,—ինքը «Կաւկազը» իւր կողմից ուզում է իմանալ, թէ ժողովրդի *ինչ առանձնայատկութիւններին* պէտք է վերագրել այն հանգամանքը, որ ցիգաններին կլանելու գործն ուրիշ կուլտուրական ազգերին չի աջողուել, բայց աջողուել է հայ ժողովրդին։

Այդ նպատակաւոր հարցմունքի պատասխանը կարելի էր տալ, բայց լաւ է, որ ինքը «Կաւկազ»-ն է յետագայ համարում իւր հարցմունքի պատասխանը տալիս։

«Որ հայոց ազգի կազմակերպու. թեան մէջ մաել են և ցիգաններ, ասում է «Կաւկազը», պէտք է նկատել, որ հայ կոչուած ազգը կազմուել է բազմաթիւ զանազան տեսակի ժողովուրդ. ներից, դրանց թւում և հրէաներից ու ցիգաններից»։

Այնուհետեւ «Կաւկազ»-ը խօսելով Թիֆլիսում գտնուող հայ դաղթականների, մանաւանդ վանեցիների գլուխների և դէմքի կազմի մասին, գտնում է, որ Թիֆլիսի հայի տիպը (գլուխը, քիթը և այլն) ամենևին նման չէ մեզ մօտ գտնուող հայ դաղթականների տիպին։ Ուրեմն կամ դաղթականներն են ոչ հայ ծագումից, կամ մեր երկրի հայերը։

«Կաւկազ»-ը գտնում է, որ շատերը, որոնք իրենց հայ են համարում, կամ չեն խօսում հայերէն (ապացոյց է երևի, որ դրանք ծագումով հայ չեն), կամ նրանց հայերէնը խառնուած է ուրիշ բարբառներով։

Եւ այդ բազմատեսակ ցեղերի միացման և իբրև հայ ժողովուրդ

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊՏՈՑ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Մառախլապատ և ցուրտ առաւօտ մը բարեկամի մը հետ դուրս ելանք Լոնդոնի քանի մը նշանաւոր վայրերը այցելելու. մառախուղն այնչափ թանձր էր, որ հազիւ կրնայինք մեզնից քանի մը քայլ հեռու եղողները տեսնել. փողոցները ջաց էին, բայց ոչ ցեխոտ. գործաւորներ և գործաւորուհիներ իրենց աշխատութեան վայրը կըգիմէին արագ քայլերով։ Մտադրեցինք ժամանակ մը քալել, քանի որ դեռ շատ կանուխ էր։ Բարեկամս, դեռ նոր Լոնդոն եկած ըլլալով, անհամար հարցումներ կուղղէր ինձ—ինչ է այս, ինչ է այն, տես սա կրպակին մէջ խաղողի մէկ լիտրան 3 շիլինի կըծախեն, ամեն ինչ այսպէս ուղէ՞ և այլն և այլն։ Ծամի մը չափ քայլելէ վերջ մառախուղը սկսաւ տակաւ փարատել, արեգական պայծառ ճառագայթներ հազիւհազէ վանեցին այդ թանձր մթութիւնը։ Եղանակը բաւական զով էր, բայց արեգական պայծառ ճառագայթները զուարթութիւն մը կը սփռէին Լոնդոնի վրայ։ Լոնդոնի մեծ հանրային պարտէզներէն մին—Հայտ Փարք հասանք. այդ օրը հոն սովորականէն աւելի բազմութիւնը մը կար, քանի որ այսպիսի պայծառ առաւօտներ հազուագիւտ են հոս և անգլիացիք այսպիսի պատեհութիւններ չեն կորսնցուներ մաքուր ու զով օդ շնչելու և վայելելու բնութեան գեղեցկութիւնը.—Հայտ Փարք ընդարձակ գեղեցիկ պարտէզ մ' է, քանի մը հատ արհեստական մեծ լիճեր ունի. ամեն կողմ հազարաւոր տեսակ գեղեցիկ ծաղիկներ կըբուսցունին. ձրի մաքուր նստարաններ կան, մարդ կրնայ հոն քանի մը հաճոյալի ժամեր անցունել։ Այս պարկին կից կըգտնուի կենդանաբանական նշանաւոր գեղեցիկ պարտէզը, որ աշխարհիս ամենամեծ ու չքեղ պարտէզն է. ասոր մէջ կարելի է գտնել ամեն տեսակ գազաններ, սողուններ, թռչուններ, ձուկեր և մինչև իսկ այնպիսի կենդանիներ, որոց տեսակը հասած է արդէն կամ հազուագիւտ։

Մեր այցելութիւնը կապիկներէն սկսանք։ Կապիկներու բաժինը մեծ սրահ մ' է, որուն կեդրոնը կայ մեծ վանդակ մը և չուրջը նեղ վանդակներ. ասոնց մէջ կային ամերիկեան ու աֆրիկեան կապիկներու շատ մը տեսակները. ոմանք այլանդակօրէն կոստոստէին, ոմանք խեղկատակութիւններ կընէին։ Բազմութիւն մը խռնուած էր վանդակի մը չուրջը, պատճառը սա էր, որ կապիկներէն մին տղու մը գլխարկը խլելով վանդակին գազաթը ելած էր եւ չդրութիւն չդարձնելով իրեն ուղղուած սպառնալիքներուն, ետ չէր դարձներ զայն. գլուխը կըգնէր, կռնակը կանցնէր և այսպէս երկար առեն պահեց հակառակ խեղճ տղուն թախանձանաց, մինչև որ պահապան մը եկաւ ու ետ խլեց կապիկի ձեռքից։

Գառուներու սրահը, ուր կային շատ տեսակ վայրի ու ընտանի կատուներ, այն առիթէն գաբշտոտութիւն մը կը բուսէր, որ անկարող եղանք երկար առեն կենալ։

Ապա այցելեցինք գազաններու սրահը. հոն երկաթեայ վանդակներով պատած փոքր սրահներու մէջ փակուած էին հսկայ առիւծներ, բենգալեան վագրեր, այլև այլ տեսակ ասիական և աֆրիկեան վայրի գազաններ. ոմանք ժայռերու տակ կը քնանային և ոմանք յուսահատ պոռոտներ կընէին վանդակին չուրջը։ Դէս օրի քանի մը վայրկեան կայ, բոլոր գազանները ոտքի վրայ են և անհամբերութեան նշաններ ցոյց կուտան։ Մայլակի մը թաւալման ձայնը լսեցինք և ահա ամեն կողմէն սկսան մռնչալ. իրենց առաւօտեան կերակուրն էր, որ կըբերէին. պահապաններ ամենուն մօտ մէկ-մէկ խոշոր կտորներ նետեցին, զոր սկսան կատաղօրէն լափել։

Գազաններու սրահին դէմ կայ կովերու բաժինը, ուր կային շատ տեսակ կովեր. այս կովերէն մին այլանդակ անասուն մը էր, ունէր խոպոպ մազեր, չուրջը քանի մը սպիտակ անկիւններ կեցած կըխօսակցէին. անոնց մօտ լինելով լսեցի, որ մին կըփափագէր այդ կովուն պէս խոպոպ մազեր ունենալ։ Շկրցի անոնցմէ հեռանալ, առանց այդ օրիորդին ճաշակը չնորհաւորելու։

Սողուններու սրահն ալ միւսներուն չափ հարուստ է. հսկայ գետեր, 3—4 մատ հաստութեամբ և 4—5 կանգուն երկայնութեամբ բոաներ աֆրիկեան և ասիական սաւդոզ և ալացող օձեր, ոմանք կըբնանային և ոմանք կըսողային իրենց ապակեպատ վանդակներուն մէջ։ Խլէզներ և այլեայլ սողուններ անհամար էին։ Այս սրահը միշտ կըտաբգնեն ջեռուցիչ խողովակներով, քանի որ այս սրահի բնակիչներուն մեծամասնութիւնը այրեցեալ գօտու երկիրներէն բերուած են և տաք կլիմայի տակ միայն կրնան ապրիլ։ Սրահին կեդրոնը կայ երկու մեծ աւազան դուրս ցցուած ժայռերով և հասարակածի առնկերով. այս

լինելու պատճառը կրնայ ըլլալ «Daily Telegraph»-ի հրատարակած «Մեծ Տուրտուքիոյ հայ ազգաբնակչութեան վիճակը» վերնագրով յօդուածը, որ կը պարունակէ Ռուսիոյ հիւպատոսներէն մէկուն հետ ունեցած հարցազրոյցը։ Ռուս հիւպատոսը կ՚ըսէ, որ հայերը ամենէն աւելի կը սիրեն Ռուսիան, որովհետեւ ան է միակ պետութիւնը, որ կրնայ զիրենք պաշտպանել։ Ռուսիոյ մէջ հայերը կը վայելեն նոյն իրաւունքները, ինչ որ ռուսերը։ Ռուսիոյ մէջ հայերը կը զբաղին առեւտուրով, արուեստներով եւ գիտութիւններով

Ասում են, որ Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը մտադիր է ստեղծել հատուկ հանձնաժողով, որ զբաղվի ռուսական գրականության մեջ հրատարակվող գրքերի ստուգումով։ Այդ հանձնաժողովի պարտականությունների մեջ կմտնի նաև գրքերի վաճառքի արգելումը։ Ասում են, որ այդ հանձնաժողովի անդամներ կլինեն Կատկովը, Պոբեդոնոսցևը, Մեշչերսկին և ուրիշներ։

—

Ռուսական կառավարությունը հրամայել է Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետին, որ Ֆինլանդիայի ռազմական ուժերի հրամանատարությունը հանձնի Ռուսաստանի զորքերի գլխավոր շտաբի պետին

թիւնը, որ Թեսսալիայից վերադարձած մօտ 4,000 ալբանացիները դեռևս հրաժարւում են արքունի գանձարանի հաշուով իրենց արուած հրացանները վերադարձնելուց։

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

—

Պարիզից Վեննայի կիսապաշտօնական «Politische Correspondenz»-ին հաղորդում են.

Բոլոր կառավարութիւնները, ըստ ե բևեռթին, արամագիր են Բաժիդար Պետրովիչ Նեգոշին Կրետէի ընդհանուր-նահանգապետ հաստատելու։ Մինչև ան գամ Անգլիան, որ սկզբում այդ քայլից խուսափում էր, այժմ պատրաստակամութիւն է յոյց տալիս միանալու միւս մեծ պետութիւնների հետ։ Ինչ վերաբերւի է սուլթանին, որը դեռ ևս իւր կարծիքը չի յայտնել, կարծում են, որ նա չի հակառակիլ Եւրոպայի միաձայն վճռին։

Նկատենք, որ Բաժիդար Պետրովիչ Նեգոշը ներկայումս Չերնագորիայում նորքին գործերի մինիստր է։ Նա իշխան Նիկոլայի հօրեղբօր որդին է, որն արդէն 10 տարի է, որ չերնագորիական մինիստրների խորհրդի նախագահ է։ Այժմ նա 48 տարեկան է։ Նա փորձուած վարիչ է և լաւ զինուոր։

Եւրոպական գրեթէ բոլոր լրագիրները, հաղորդելով, որ պետութիւնները Չերնագորիայի իշխանի այդ ազգակցին են ուղում Կրետէի ընդհանուր-նահանգապետ նշանակել, նկատում են, որ ժամանակ է վերջ տալ Կրետէում տիրող խռովութիւններին և նորքին կռիւներին։ Իսկ որ խառնակութիւնները դեռ ևս չարունակւում են Կրետէում, դրան ապացոյց կարող է լինել հետևեալ նորագոյն տեղեկութիւնը։

Այս օրերս ապստամբները սկսեցին ամրակոծել Կիսամո բերդը։ Թուրք բերդապահ զօրքը հրացանաձգութեան հրացանաձգութեամբ պատասխանից և այդ կռիւը տեղ բաւականին երկար ժամանակ։ Կանդի քաղաքի շրջակայքում ապստամբները փորձեր արին քշելու ոչխարների հօտերը, բայց յետ մղուեցին։ Աւելի քան հազար քրիստոնեայ ապստամբ պաշարում են նոյնպէս քրիստոնեայ Վերիվոլակի գիւղը, որ պէտք հանեն իրենց ընկերոջ վրէժը, որին սպանել էին այդ գիւղի բնակիչները։ Մի կատարի կռիւ տեղի ունեցաւ Առհասարակ կղզու դրութիւնը առաջուայ պէս կրիտիկական է։

ՉԻՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋՆԴԻՊԸ

—

«Times»-ում հետևեալ հեռագիրն է հրատարակուած Պեկինից.

«Չինաստանը յոյս ունի, որ գերմանացիները կը հեռանան Քիաո-Չանից և անպայման ընդունում է Գերմանիայի պահանջները, որոնք են. վարձատրել սպանուած միսիոնարների ընտանիքներին. եկեղեցի շինել սպանուածների յիշատակին Թայնինգ-Չանում. պաշտօնական անել նահանգապետ Լի-Նինգ-Չինգին. վճարել Քիաո-Չանի գրաւման վրայ եղած ծախքերը և արտօնութիւններ տալ հանքային հարստութիւնները չահագործելու և Շանթունգում երկաթուղիներ չինելու, բայց ոչ անպայման, այլ այն պայմաններով, որ ստացել են ֆրանսիացիները և հաստատուած են 1895 թ. պայմանագրութեամբ։

Այդ հեռագրին նուիրած առաջնորդող յօդուածում յիշեալ լրագիրն ասում է, որ Անգլիան Գերմանիային պէտք է յիշեցնի, որ ինքը 1860 թ. Չինաստանի հետ իրեն նպաստաւոր պայմանագիր է հաստատել, ուստի քրիստոնական կառավարութիւնը կրկնդի, որ Անգլիային էլ նոյնպիսի արտօնութիւններ տրուին։ Ընդ սմին Անգլիան այս կանոնին է հետևում չխառնուել Չինաստանի ներքին գործերին, բայց, հիմք ունենալով 1860 թ. պայմանագիրը, պահանջել իւր համար նոյնպիսի իրաւունքներ և արտօնութիւններ, որ պիտի ստանում են միւս պետութիւնները։

Կարծում են, որ այդ յօդուածը թելադրել է ինքը բրիտանական մինիստրութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ղրել են զինուորականներ, որոնք չեն ընդունել թէ թշնամու լրտեսը կարող է մի վնաս հասցնել, այնպէս որ, բռնած ժամանակն էլի թողել են։ Օրինակ 1859 թ. իտալացոց ապստամբութեան ժամանակ մի լրտես են բռնում և բերում յայտնի գեներալ Բոլբակոն տալիս։ Բոլբակին հարցնում է.

—Դու լրտես ես։

—Այո, պարոն...

—Դու հիմայ ինչ որ տեսել ես այս տեղ, աւստրիացիներին պիտի պատմիս։

—Այո, պարոն...

—Դու կարծում ես լաւ բան ես անում։

—Այո։

—Որձակ ես, գնայ և պատմիր աւստրիացիներին, որ ահա մի քանի ժամ է, որ սպասում եմ նրանց։ Սա, որ արդէն սպասելուց ձանձրացել եմ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԱՐԻԶ, 3 դեկտեմբերի.—Պանամայի պարլամենտական քննիչ յանձնաժողովի անդամներից 3-ը հրաժարական են ներկայացրել, նրա համար, որ յանձնաժողովը հրաժարւում է յանդիմանութիւն յայտնել մամուլի մէջ լոյս տեսած մի քանի դոկումենտների բովանդակութեանց համար։

Իրաւաբանական դպրոցում տեղի ունեցած ուսանողների ցոյցերից յետոյ, թուով 300 ուսանողներ ցոյցեր արեցին Սեն-Ժակ փողոցում, ուր ոստիկանութիւնը ցրեց նրանց։ Դրանից յետոյ ուսանողները դիմեցին ծովափով հասնել ճակատագրական հրապարակը, ազատելով արձակելով Շերերի հասցէին, բայց ոստիկանութիւնը նրանց ցրեց։

ԿՈՂԿՕԹԱ. — Սահմանի վրայ լուրջ կռիւ տեղի ունեցաւ. յետնապահ զօրագունդը, որին կառավարում էր գեներալ Ուչտամակոտը, յարձակման ենթարկուեց տեղացիների կողմից, որի միջոցին անգլիացիներից սպանուեցան և վէրքեր ստացան 4 սպայ և 40 զինուոր։

ՀՌՈՄ. — Դի Ռուդինի քաղաքական գործիչների հետ ունեցած քանակցութիւնները պսակուեցան կատարեալ յաջողութեամբ։ Նոր մինիստրութիւնը վերջնականապէս կազմակերպուած է հետևեալ կերպով —Դի Ռուդինի նախագահ և ներքին գործերի մինիստր, Վիսկոնտի Վենոստա—արտաքինգործերի մինիստր, Բրին—ծովային մինիստր, Բրանկա—ֆինանսների մինիստր, Լուցատի—գրամատան մինիստր, Լի-Ծամարցանո—զինուորականմինիստր, Գալո—լուսաւորութեան մինիստր, Պաւոնչելլի—հասարակական աշխատանքների մինիստր, Գոկկօդրան—երկրագործութեան մինիստր, Սինէօ—պատ-հեռագրատանց մինիստր։

ԳՈՍՀԻՆՈ, 4 դեկտեմբերի.—Դեկտեմբերի 3-ին կովկասից վերադարձաւ Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնան Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ միասին։ Գատչինոյի կայարանում Թագուհուն դիմաւորեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնան և Մեծ Իշխաններ Միխայիլ Ա. լէքսանդրովիչը և Ալէքսանդր Միխայլովիչն օգոստոսի սկզբներին հետ միասին,

Կ. ՊՈԼԻՍ.— Բունատանը դիմել է Դրանը մի խնդրագրով, որպէս զի մի ամիս ժամանակով յետաձգուի հաշուեթեան պայմանագրի հաստատումը։ Դիւանագիտական շրջաններում այդ բանը մեծ զարմացում պատճառեց։ Դրան չրջաններում այդ պահանջը, որը քրն. նելու է դեսպանական ժողովում, համարւում է անհիմն և անիրագործելի։

ՔԻԼ.— Ցեղս ժամանեց կայսրը պրինց Հենրեխին հրաժեշտ տալու համար։

Կ. ՊՈԼԻՍ.—Ծովային մինիստրը այս տեղի գերմանական և ֆրանսիական բանկատէրերի հետ բանակցութիւններ է անում 600,000 ոսկու փոխառութիւն անելու համար, որով պիտի վերազմուի նաւաշէն «Մախտուսէ» ընկերութիւնը։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Վ. Ա. Թ.

Հոգեշաբաթի ռեկտ. 10-ին, 1897 թ.
Հայ դերասանական ընկերութիւնը
կը ներկայացնէ
ի նպաստ
Ա. ՍԱՐԴԱՐԵԱՆ ԱՐԻՃԱՏԵԱՆԻ
Առաջին անգամ
I
ՃԻՐԱՆՆԵՐ

Պիեսը—երեք գործ. հեղ. Պոլ Հերվիէի
փոխադր. Ա. Սարդարեան. Արեշատեանի։

Ա. ԴՈԿՏՈՐ ԹԱԹՈՒՍ
կատակ 1 գործող. հեղ. Իվան Շչեգլովի,
փոխադրութիւն Ա. Սարդարեան. Արեշատեանի,
Սկիզբը 8 ժամին երեկոյեան։
(853) 2—1.

М) 8—1

ԶԳՈՒՇԱՑԻՔ ԿԵՂԾԻՄՆԵՐԻՑ!
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՄՍԿՆԵԼՈՐԿ ԾՈՒԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
ԴԵՂԱՏՈՒՐՆ
Գ. Ֆ. ԻՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մուները, արևից այրուածքը, դեղին բծերը, ելունգները, բշտիկները և ապրում է աւելորդ քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդուզարդի առնուշեռտ բարձր որակութեան օճառ։

Մի կտորի գինը 50 կ., 1/2 կտորինը 30 կ։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։

Դիմաւորպահանջը նոր ուսումնական համար Գ. Ֆ. Իրգենսի մօտ Մոսկուայում։ Դեպոն թիֆլիսում, դեղատնային ապրանքների առևտրի ընկերութեան, Ծուբինովի, պ. պ Գոպովի. Մ. և Ազմուրովի դեղատներում։ 24—16

ՍԱՐԱՏՈՎԻ ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԲԱԶՄԱՏԵՍԱԿ
ՆՈՐՈՒԹԻՆՆԵՐ
Նմուշների այլ բոմն ուղարկւում է պոստային 40 կ. մարկերով։
Առևտրական տուն ԱՆԴՐԷՅ ՍՏԵՊԱՆՈՎ և ՈՐԴԻ
Саратовъ, Никольская, противъ музея.
Հեռագիրները—Саратовъ Андрѣю Степанову.
(М.) 123093. 5—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

НОВЬ

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

иллюстрированный двухнедѣльный вѣстникъ современной жизни, политики, литературы, науки, искусства и прикладныхъ знаній

ЗА 17 РУБЛЕЙ

безъ всякой доплаты за пересылку премій, подписчики „НОВИ“ получаютъ въ 1898 году, съ доставкою и пересылкою во всѣ места Россійской Имперіи, слѣдующія шесть изданій

1] ЖУРНАЛЪ НОВЬ 24 выпуска въ форматѣ наибольшихъ европейскихъ иллюстрацій	2] особый иллюстрированный ОТДѢЛЪ МОЗАИКА (24 выпуска) составляющій какъ бы самостоятельный журналъ по прикладнымъ знаніямъ, вмѣщающій въ себѣ 16 рубрикъ.	3] ЖУРНАЛЪ ЛИТЕРАТУРНЫЕ СЕМЕЙНЫЕ ВЕЧЕРА (отдѣлъ для семейнаго чтенія 12 ежемѣсячныхъ книжекъ романовъ и повѣстей.
4) ВОСЕМЬ ПЕРЕПЛЕТЕННЫХЪ ТОМОВЪ полнаго собранія сочиненій П. И. МЕЛЬНИКОВА [АНДРЕЯ ПЕЧЕРСКАГО]	5) ЧЕТЫРЕ ПЕРЕПЛЕТЕННЫЕ ТОМА полнаго собранія сочиненій ВЛ. ИВ. ДАЛЯ [КАЗАКА ЛУГАНСКАГО]	6) ДВѢ РОСКОШНО ПЕРЕПЛЕТЕННЫЯ КНИГИ, ФОРМАТА inf·folio „ЖИВОПИСНОЙ РОССІИ“, посвященныя описанію МОСКВЫ и Москов, промышлен.обл.

XIV [1898] ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ СЪ 1 НОЯБРЯ 1897 Г.

ГОДОВАЯ ПОДПИСНАЯ ЦѢНА за всѣ вышеобъявленныя изданія вмѣстѣ съ пересыллою во всѣ мѣста Россійской Имперіи, безъ всякой доплаты за перес, и дост. безплатныхъ премій. **14 РУБ.**

За границу—24 рубля.

Разсрочка платежа допускается, при чемъ при подпискѣ должно быть внесено не менѣе 2 р.; остальныя же деньги могутъ высылаться по усмотрѣнію подписчика ежемѣсячно, до уплаты всѣхъ 14 руб. При подпискѣ въ разсрочку безплатныя преміи высылаются только по уплатѣ всей подписной суммы.

Къ свѣдѣнію гг. новыхъ подписчиковъ не получавшихъ „НОВИ“ въ 1897 году.

Лица, не состоявшія подписчиками „НОВИ“ въ 1897 году и не имѣющія еще первой половины СОЧИНЕНІЙ НАДРЕЯ ПЕЧЕРСКАГО и первой половины СОЧИНЕНІЙ В. И. ДАЛЯ, могутъ, подписываясь на «НОВЬ» въ 1898 году, получать первые шесть томовъ (т. е. томы 1 по 6) сочиненій А. Печерскаго и первые шесть томовъ (т. е. томы 1 по 6) сочиненій В. И. Даля, вмѣсто томовъ, выдаваемыхъ въ 1898 году прежнимъ подписчикамъ. Вторая же половина сочиненій, какъ А. Печерскаго, такъ и В. И. Даля, будетъ выдана этимъ новымъ подписчикамъ въ 1899 году, въ чемъ редакція теперь же и принимаетъ передъ ними обязательство.

Новые подписчики на «ОВЬ» 1898 года, т. е. лица, не бывшія подписчиками на журналъ въ минувшемъ 1897 г., при уплатѣ за 1898 г. 26-ти рублей, вмѣсто 14-ти руб., могутъ получить въ 1898 г.:

въ 14 томовъ полнаго собранія сочиненій Андрея Печерскаго и всѣ 10 томовъ полнаго собранія сочиненій В. И. Даля,

также и тѣ переплетенныя книги „Живописной Россіи“, которыя выдавались подписчикамъ въ 1897 году; значитъ, вмѣсто двухъ книгъ „Живописной Россіи“, они получатъ четыре переплетенныя криги этого изданія и, вмѣсто 12 томовъ сочиненій А. Печерскаго и В. И. Даля 24 тома

Подписка принимается исключительно въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. Вольфъ, въ С.-Петербургѣ, Гостиный дворъ, 18; въ Москвѣ—Кузнецкій мостъ, № 12, и въ редакціи „НОВИ“, въ С.-Петербургѣ, Васильевскій остр., 16 лин., собств. домъ, № 5—7.

Подробныя объявленія о подпискѣ и условіяхъ разсрочки платежа высылаются изъ главной Конторы редакціи журнала «Новь» (С.-Петербургъ, Вас. Остр. 16 лин., д. № 5—7) по востребованію безплатно.

6—3

Дозв. цензурою, Тифлисъ, Декабря 5-го дня 1897 г., Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера